ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

27.08.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 670-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԵՐԻՇԵՆ ԳՅՈՒՂԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 39 ՀԱՍՑԵԻ 0,035 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԵԼՈՒՆՑԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետի դրույթները, Գորիսի համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 24-ի թիվ 92-Ա որոշման 1-ին կետի 2)-րդ ենթակետը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2025 թվականի օգոստոսի 26-ի «Հողամասն աճուրդով վաճառելու մասին» թիվ 1 արձանագրությունը, ըստ որի 2025 թվականի օգոստոսի 26-ին Գորիսի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս համայնքի Վերիշեն գյուղի 4-րդ փողոցի թիվ 39 հասցեի հողատարածքի սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Հովհաննես Թելունցը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գորիս համայնքի Վերիշեն գյուղի 4-րդ փողոցի թիվ 39 հասցեում գտնվող 0,035 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատարածքը, որը չի համարվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս (ծածկագիր՝ 09-096-0079-0034), բնակելի տուն կառուցելու նպատակով օտարել Հովհաննես Թելունցին՝ այսուհետ Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 1110000 (մեկ միլիոն մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ վճարել Գորիս համայնքի բյուջեի N 900285125416 հաշվին:
3. Լիազորել Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետի տեղակալ Վ.Պողոսյանին հողատարածքի համար ձևավորված գինը վճարելուց հետո, 2-օրյա ժամկետում Գորիսի համայնքի ղեկավարի անունից Գնորդի հետ կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:
4. Նախազգուշացնել Գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2025թ. օգոստոսի 27
ք. Գորիս